



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԹԻԻ 4.

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ՆԻՍՏ ԶՈՐՐՈՐԴ

ԶԿՆԻ ՄԱՄՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ

ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ

44 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1870



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՄՍԻՆՏԻՆՍԵԱՆ

— 1870 —

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԱՏԵԱՆ 11 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1870.

ՆԱԽԱԳԷՆ. — ՍԻՐԱԶՄԵՆ ՊՈՏՐԻՍԻՐԻ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ՕՏԼԱՆ ԷՖԷՆՏԻ

ԿԱՐԳ ԽՆԳՐՈՑ

1. Ընտրութիւն Ատենադպրի Ընդհանուր ժողովոյ .
2. Ընտրութիւն Սոսյ եւ Աղիւստարայ Կաթնղիկասութեանց խնդրոյն .
3. Վերաքննութիւն Սոսմանադրութեան .
4. Ընթերցումն եւ հաստատութիւն ատենական կանոնաց .
5. Ժողովրդեան կողմանէ ներկայացեալ հանրագրքներ :

Ատենադպրութեան ժամը 6 1/2 ին , 62 երեսօտիանաց ներկայութեան , եւ ժողովին ժամերը խնայելու համար դիւանն առաջարկեց ժողովին որ խնդրոց կարգին համեմատ նոր Ատենադպրութեան քրէարկութիւնն սկսի , եւ ատենադրութեան ընթերցումը քրէահամարի միջոցին ըլլայ :

Քրէահամարի քննիչ կարգեցան Տ. ՄԵԼԻՍԵՆԻ փարզասպետ , Մուրատեան , Եռսուֆեան եւ Քոյոյեան էֆէնտիները :

Առաջին անգամին քրէները բաժնովելով զանազան անձանց վրայ բացարձակ առաւելութիւն չը դոյացաւ , ուստի առաւելագոյն քրէ վաստրիկոզ Ռուսինեան եւ Մէրեէմ-քուլի էֆէնտիներու վրայ կրկին քրէարկութիւն ընել հարկ եղաւ :

ՌՈՒՍԻՆԵԱՆ ԷՖ . — Զանազան պատճառներով մանաւանդ անձնական սկարութեան համար Ատենադպրութեան հրաժեշտ տալու պիտի պարտաւորիմ . ուստի կը ցանկամ որ ժողովը իմ ընտրութեանս համար ժամանակ չը կորուսնէ :

ՄԵԼԻՍԵՆ-ԲՈՒԼԻ ԷՖ . — Նկատելով որ ընտրութիւնները ժողովոյ ժամերէն բաւական աւան կը դրաւեն , մինչդեռ ժողովը ծանրակշիւ խնդիրներ ունի լուծելու , եւ դիտելով որ

եւ արդէն Ընդհ . ժողովոյ դիւանին մէջ երկրորդ Ատենադպրի պաշտօն ունենալով , առաջին Ատենադպրի համար իմ ընտրելութիւնս եթէ ըլլայ , երկրորդ Ատենադպրի մը ընտրութեան ալ տեղի տալու հաւանականութիւն ունի . այդ պատճառով եւս կը հրաժարիմ եւ զայն իմ հետեւորդիս կը թողում :

Ընդհ . ժողովն այսու ամենայնիւ ընտրութեանց մէջ հրաժարական ընդունելը չընդունելով , եւ կանոնաց հետեւելը նախատեսեալ համարելով , յիշեալ երկու առաւելագոյն քրէ ըստացողաց վրայ երկրորդ քրէարկութիւնը կատարեց , եւ 49 քրէով Ռուսինեան էֆէնտին Ատենադպր ընտրվեցաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Ռուսինեան էֆէնտին առաջուց յայտնած էր որ եթէ Ատենադպր ընտրվելու ըլլայ պիտի հրաժարի զանազան պատճառներով : Ընդհ . ժողովը ինչպէս արդէն իսկ յայտնեց՝ կը ցաւի այս հրաժարականին վրայ եւ կը փափաքի որ Ռուսինեան էֆէնտին չը պնդէ անոր վրայ : Դիւանին անդամները իրաւունք ունին սաստիկ զգալու այս փափաքը , զի կը հասկնան ամենքը թէ որչափ պատիւ եւ օգուտ է իրենց Ռուսինեան էֆէնտիի ներկայութիւնը իրենց մէջ , իսկ մասնաւորապէս Ատենադպր երջանիկ պիտի համարի զինքը եւ

թէ այն որ իր ազայ օրերէն ի վեր իր մտակից ու սրաակից բարեկամն եղած է իր առանձնական ազգային կեանքին մէջ , այսօր իր գործակիցն ըլլայ նաեւ (Բնոյն ժողովոյ Գրեանին մէջ)

ՌՈՒՍՆԵԱՆ ԷՖ . — Ես չնորձակալ եմ ժողովին մեծ մասէն եւ Ասենապետ էֆէնտիին յայտնած յատուկ զգացումներէն որք զիս կը պատուեն , բայց ժողովն ինէ չնորձակալ չը պիտի կարենայ ըլլալ . զի այդ պաշտօնը իմ կարողութենէս վեր է . ստի երիտասարդ ժողովականաց յատկացեալ տեղ չին է որ թարմ ուղեղ ու գալար գրիչ կը պահանջէ , մինչդեռ մերինները ալ այսուհետեւ հինցած ու մաշած են յառաջագոյն աշխատութիւններէ , մինչդեռ մեր կարողութիւնքը՝ եթէ կարողութիւն կային , ի տկարութիւն այլակերպեալ են ժամանակին ձեռք . ուստի կրասերագունից կը ցանկամ թողուլ այդ տեղը որք ձեռնհաս են ա՛նկանց կարողութեամբ , եւ ինծի համար անկարելի ըլլալը գործեալ կը կրկնեմ : »

Ընդհանուր ժողովն ու Սրբազան Պատրիարքը գործեալ պնդեցին եւ այս միաձայն փափաքին առջեւ դիմաւ Ռուսիական էֆէնտիին եւ ժողովին որոշումն ու Սրբազանին կա՛քր յարգելու համար ընդունեց Ասենապետութեան պաշտօնը քիչ մը ժամանակի համար :

Փոխ . Ասենապետ էֆէնտիին քրէհամարի ատեն նախորդ նիստին ատենագրութիւնն ընթերցաւ , դար ժողովն առանց դիտողութեան ընդունեց :

Ասենապետ էֆէնտիին ժողովոյն ներկայացուց 13 երեսփոխանաց նամակներ , որոնցմով կը յայտնէին թէ անձնական տկարութեան կամ զբաղմանց պատճառաւ այսօրվան նիստէն բացակայ մնալու ստիպման են : Ահառուսիկ , ըստ , ուրիշ երկու նամակներ ալ որոնցմով Քէմնաճեան Արդիք եւ Քարամաճեան Յարութիւն էֆէնտիինը հրաժեշտ կու տան երեսփոխանութեան պաշտօնէն . — Յետ ընթերցման նամակաց Ասենապետ էֆէնտիին յարեց , « Արդիք էֆէնտիին իր հրաժարագրին մէջ կ'ըսէ թէ՛ ստիպողական պարագաներ անկարելի կ'ընեն իրեն իւր պաշտօնին պարտախոսութիւնները օրինաւորապէս կատարել : Այս հրաժարականները ցաւալի են , բայց ցաւալի եւս է այն երեսփոխանաց ընթացքը որք երեսփոխան կը մնան , բայց Բնոյն ժողովոյ նիստերուն չ'են ներկայանար :

Հետեւաբար որոշվեցաւ ընդունիլ այս երկու հրաժարականները :

Ասենապետ էֆէնտիին խնդրոյ կարգին համեմատ՝ անմիջապէս Սոյ եւ Ազխամարայ խորհրոյն շարունակութեան անցնելով , կարգով խօսք կ'ու տայ այն երեսփոխանաց որք նախորդ նիստին վիճարանութիւնը շարունակելու համար խօսք ուղած էին :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — Նախորդ նիստին մէջ մեր պատուարժան պաշտօնակից Այգաաւան Մատթէոս էֆէնտիին առարկութիւն հանեց թէ , երբ Սոյ եւ Ազխամարայ կաթուղիկոսութեանց համար քրէ սրվի , Ս . Էջմիածինը թողելու առաջին քայլն առած պիտի ըլլայ երեսփոխանութիւնը :

Անմիջապէս խօսք խնդրեցի պատասխանելու , բայց որովհետեւ ժամանակը լրացած էր , այսօրվան նիստին մէջ առաջին խօսքն ինծի մնաց ըստ ազգարարութեան Գրեանին :

Երեք տարի առաջ երբ վիճակային համագումար ժողովով երեք կաթուղիկոսութեանց թափուր ակունքներն համար երեք ընտրելեաց ցանկեր պատրաստվեցան , եւ երեսփոխանութիւնը հրաւիրվեցաւ անոնց մէջէն իր ընտրութիւնն ընել . երբ Էջմիածնի կաթուղիկոսք Սոյ եւ Ազխամարայ ընտրելի ներկայացան , երբ Սոյցի կաթուղիկոս յէջմիածին ընդհանուր Քուրքաստանի Հայոց կողմնէ պատգամաւոր զրկվեցաւ , երբ այս անօրէնութիւններն ընող վիճակային եւ երեսփոխանական ժողովներն իրենց մէջ Սոյ եւ Ազխամարայ փոխանորդներն ալ ունենալով , ազգային հոգեւոր գերագոյն իշխանութեան միութիւնը լուրջաբար կը հաստատէին , եւ միւս կողմէն ալ այդ իշխանութեան վտանգաւոր վիճակին վրայ ալ բողոք կը բռնային , եւ զայն իր նախնի վիճակին վերածելու ամեն դոհողութիւն կ'ուխտէին , որու մտքէն կ'անցնէր թէ այն որոշումներն ու քրէնները՝ երեք տարի ետքը , Էջմիածնի ակունքն ըստմանելու առաջին քայլը պիտի համարվէին :

Ո՞վ հնարեց այս խնդիրը , եւ ինչպէս :

Եր յիշենք որ անցեալ տարի Կ . Պոյոյ պատրիարքին ընտրութեան խնդրոյն մէջ Ասականութեան եւ Էջմիածնականութեան խնդիր մը ծագեցաւ : Բայց անկէ առաջ Սրբազան Հայրապետ յատուկ կոնդակով մը Սիան ու Ազխամարը հակառակաթոս հրատարակեց :

Քիչ մ'ալ յառաջ երթանք : Ահափառ Կաթուղիկոսը Պրուսայէն Պոլիս գալէն ետքը եւ իր անդրանիկ օրհնութեամբն ու քահանայի մը կատարելէք խաչահանգիստն ու անդառանդ

Ստիպող Կաթուղիկոսան չորս ա՛կունքեր կատարելէն ետքը : իր առաջին խնդիրն ըրաւ Սոյ եւ Ազխամարայ անխաւեր կաթուղիկոսներն ամենի իր հետք ամենի :

Այն ատեն այս խնդիրը ժողովրդեան մէջ ալ տարածայնվելով , ժողովուրդը հանրադրով մը երեսփոխանութեան դիմեց , եւ նախորդ որոշմանց դարձադրութիւնը խնդրեց : Երեսփոխանութիւնն ալ խիստ լեծապոյն մասաւր այն առաջարկութիւնը մերժեց :

Ըսել է թէ Էջմիածնի կաթուղիկոսի ընտրութեանէն ետքն ալ այս խնդիրը նորին Սրբազանութեան ի Պոլիս գտնված ատենն ալ յուղված եւ լուծված է :

Սակայն ինչու անկէ մինչեւ ցարգ այդ խնդիրները չը վերջացան . չ'ենք ուզեր քննել , որ ուրիշ բազմազիմի վէրքեր չը բացվին :

Այժմ այս խնդրին մեծ եւ երթալով աւելի մեծցած ու ծանրացած խնդիրները արդի երեսփոխանութեան կը ներկայանան իրենց վերջնական լուծումն ստնելու :

Այդ պիտի դարձանաք , երբ ըսեմ թէ Այգաաւան էֆէնտիին եւ իր համակարծիքներուն առաջարկութեան մէջն է Ս . Էջմիածնի զէմ եղած սղանալիքը : Սոյ եւ Ազխամարայ կաթուղիկոսաց ընտրութիւնը իրենց թեմականներուն թողունք եւ մենք Էջմիածնականքս ամենեւին չը միջամտենք ըսելը , ազգային միութեան եւ ամբողջութեան կապը խցելու եւ ցիրեցան ազգը երեք գլուխներով երեք մարմիններու բաժնելու գրութեան առաջնորդել է :

Քաղ . ժողովին առաջարկութիւնն ալ , որ թերեւս զիջողութիւն մ'ընելու համար ըլլայ , գործեալ միւսնոյն ճամբան կը տանի :

Այս առաջարկութեանց մէջ միշտ բաժանում կայ . միշտ երեք մարմնոց երեք գլուխներ ունենալու վտանգաւոր հետեւանքը կայ . եւ Արբազան Կաթուղիկոսին առաջարկութեան համեմատ դաշնազիր մը ստորագրելու պէտքը երեսն կու գայ :

Բայց ասանկ դաշնագիր մը ինչպէս անեղծ եւ հաստատուն կրնայ մնալ Վճկրնայ ըսել թէ Սիան ու Ազխամար արդի գտնված վիճակին մէջ պիտի մնան մինչեւ վերջը . ո՞վ կրնայ ըսել թէ Սոյ եւ Ազխամարայ միարանութիւնը այժմանային նման վիճակ մը պիտի ունենայ : Եր մը Սոյ հարստ եւ դիտուն կաթուղիկոս մը իր խելացի միարաններովը եւ ժողովրդովը մէկտեղ Էջմիածնի զէմ սղանալիքութեան դրօշակ չը կըր-

նար բանայ , եւ ինքզինքը ընդհանրական կաթուղիկոս հրատարակել , եւ այժման կնքված դաշնագիրը պատճառ անառկնել : Վճկրնայ ըսել թէ ուրիշ Էջմիածնական (ներկեցէք որ այժմ այս բաները գործածեմ) թեմերու բովանդակ ժողովուրդ , որ մը իրենց առաջնորդովն հանդերձ կամ առանց առաջնորդի (վասն զի հիմա շատ առաջնորդներ ինքնին կամ ժողովրդեան զժողուութենէն ստիպեալ իրենց սեփական վիճակը թողելու եւ ուրիշ վիճակ ստանալու վրայ են . շատ կախակազաններ իրենց պատկեալ թեմերէն հեռացած են .) չ'են կրնար կամք յայտնել Սոյ կամ Ազխամարայ թեմական ըլլալու . օրինակի համար Վանայ ժողովուրդը միաճամուռ եթէ կամի Ազխամարայ թեմական ըլլալ , մի պիտի զսպէ այս շարժումը . — կեդրոնական վարչութիւնը . բայց անի ստանկ խնդրոց միջամտելու իրաւունք մը չունի կ'ըսէք . հապա թէ որ ասանկ շարժմանց մէջ ազգեցութիւններ ալ մանեն կրնաք հասկնալ ըսածս : Սակայն այսպիսի շարժում մը արդիւնք մէկ զէնք մը միայն կը մնայ , բանադրանք , հայաձանք , խաչահանութիւն . — Ահա երեք մարմին եւ երեք գլուխ ունենալու գրութեան խիստ վտանգաւոր հետեւանքը : Ազգը խաղալէք պիտի ըլլայ գլուխներուն եւ անոնց բանադրանաց շանթերուն , եւ այս կուրիներէն ժամանակ չունենալով պարագլուխն իր բարոյական եւ նիւթական կենաց , բոլորովին վերձանալու գլխքը պիտի ստանայ : Երեսփոխանութիւնը պիտի հաճի այսպիսի մեծ պատասխանատուութիւն մը ստանձնել ապագային առջեւ : Օրինակ մը բաւական կը համարվի , քրենեցէք մեր հոգովեական ազգայնոց վիճակը , տեսէք խելո՞ ժողովուրդը ինչ կը քաշէ գանազան կրճակական սնունդներով ձեւացած կուսակցութեանց ձեւքը :

Ուստի յանուն ազգային միութեան կը խնդրեմ , մէկզի գրէք խարտութիւնները , որ բացարձակ գլուխներու կամ գլխաւորներու փառասիրութեան ծնունդն են , մէկզի գրէք կողմնադանդութեան կամ հետեւութեան սկզբունքը , իրաւասութեան խնդիրը , որ առանց ազգային սինտոզոսի վճիռ արձակելու փորձն ընող կաթուղիկոսի մը անխորհուրդ առաջարկութիւնն է . տանք օտարէն մեր մէջ մանելու վրայ են . սիրտ առէք ասանք արմատէն խելու : Թե՛մ , ժողովուրդ սեփական , մասնաւորութիւն , վիճակայնութիւն , իրաւասութիւն , վերուցէք աս բաները , ճանչելու համար մէկ

ազգ , մէկ եկեղեցի Հայաստանեայց , եւ մէկ եկեղեցական բարձր վարչութիւն , համօրէն ազգէն ընտրեալ , ազատ քաղաքական ամեն նկատումներէ եւ ճնշումներէ :

Ձեզի կ'ըսեմ , ով սրբազան Հարք , եւ ով մեծապատիւ Երեւոյիսանք , թէպէտեւ , երեք տարի յառաջ գնացէք , երբ ոչ չե՛ջ միածին , ոչ 'ի Սիւս եւ ոչ յԱզմար գլուխներ կային , այն ատեն ինչ պարզութեամբ եւ ինչ հեռատես խորհրդով միացուցիք ազգը . ինչ գեղեցիկ ներգաշնակութեամբ իրար բերիք եւ յօդաւորեցիք . նոյնն բրէք այսօր . հաւատացեք որ այնպիսի յատակ եւ անպզտոր ժաբերով տրված վճիռներն աւելի յարգելի ու մեծարելի են :

Յերեմի ըսէք , երեք տարի յառաջ Այժմակային ժողովն իր վճիռը , Երեւոյիսանութիւնն իր որոշումը , եւ ժողովուրդն ալ իր հանրազրույթ ատենց վրայ ունեցած հաւանութիւնն յայտնած է , լինցած խնդիր մըն է . միայն այսօր մանրակրկիտ եւ լուսաւոր վիճարանութեամբ մը պարզեցաւ : Ըսէք թէ արդէն Սոյց անուանեալ թեմերը Սուրբ Եջմիածնի հետ միացած լինցած են , Ատանայի , Հայէպի եւնի առաջնորդները Պօլիսէն վաւերանալով , մինչդեռ Պօլսոյ Պատրիարքը Եջմիածնի կաթողիկոսին փոխանորդութիւնը կը վարէ Թուրքաստանի Հայոց կրօնական գործերը սնօրինելու :

Ըսէք թէ Պալատէնեացի պատճառով ոչ Եջմիածինէն կը գաւովինք , եւ ոչ Ռուսաստանի հինգ հարիւր հազար ընտիր Հայոց անդամակցութեանէն . բայց Պալատէնեան ալ երբէք ընդունելիք չ'ունինք : Ըսէք թէ պարապ տեղը Սոյց եւ Ազմարայ կաթողիկոսութիւնները վերցնելու հոգ չը տանին , կարծելով որ այն ատեն ազգը ստիպեալ միացած կը մնայ Եջմիածնի . միթէ քանի մը եւս իսկուպոսներ Ազգին ընդհանուր հաւանութեամբը շէն կարող կաթողիկոս մը ձեռնադրել :

Ըսէք թէ ինչպէս ի Ս Եջմիածին ձեռնադրելի եպիսկոպոսացուներու վկայագիրը Կեղը , Վարչութիւնը կու տայ , նոյնպէս պիտի տայ նաեւ ի Սիւս եւ յԱզմար ձեռնադրելի եպիսկոպոսացուներու համար որոշեալ թիւոյ մը համեմատ : Գրեմ թէ պիտի ըսվի որ Թուրքաստանի բոլոր վիճակաց մէջ Ս Եջմիածնի Աթոռին ընդհանրական կաթողիկոսի անուան յիշատակութիւնն ըլլայ , ինչ գոտարութիւն կայ ատոր , ըսէք որ կատարվի . բայց ըսէք թէ ոչ երբէք Եջմիածնի կաթողիկոսը իր ընդհանրականութեան եւ ազգային եկեղեցւոյ նկրկնակութեան ազդեցութիւնը պիտի կրնայ գործա-

ծել , մինչեւ որ ազգային եկեղեցւոյ անկախութիւնը բնարարող Պալատէնեան չը բարձրի , եւ զանազան թաղաւորութեանց իշխանութեան ներքեւ գտնվող ամեն ազգայնացմէ ընտրեալ ազգային սինդոքսի մը գործակցութիւնը չ'ունենայ իր քով , եւ այդ սինդոքսին վրայ բոլոր տիրող կառավարութեանց հզօր պաշտպանութիւնը :

ԵՌՆՍՈՒՅԵԱՆ ԷՅ . Նախորդայ ատեւաին մէջ յանուն Քաղ . ժողովոյ խօսք ու դած էի , մի եւ նոյն միջոցին ուրիշ խօսք ուղղութեամբ եզան , կը թողում որ անոնք ալ խօսին , յետոյ կարգս կ'առնում :

ԻՌԹԻՒՃԵԱՆ ԿՐ . ԷՅ . — Նախորդ նիստին խօսք ուղեցի եւ խնդիրը քրէի գնել պիտի առաջարկէի . բայց քանի որ վիճարանութիւնը շարունակել որոշվեցաւ , առ այժմ ըսելիք մը չ'ունիմ :

ԿԻՒՄԻՒՅԵՐՏԱՆ ՌՈՒԲԷՆ ԷՅ . — Սահմանադրական երկիրներու մէջ , երեւոյիսանական ընտրութեանց ատեն , ժողովրդոց մէջէն անոնք որ ինքզինքնին երեւոյիսան ընտրելու արժանի կը գտնեն , կ'սկսին օր առաջ թէ լըրադրաց միջոցաւ , եւ թէ մասնաւոր չ'ընչընչէրէն մէջ իրենց սկզբանցը դաւանութիւնը տալ . ասանկով ժողովուրդը կը հասկնան իրենց ընտրելիներուն սկզբունքը , եւ ըստ այնմ կ'ընտրեն : Եսկ մենք թէպէտեւ սահմանադրական ժողովուրդ մըն ենք , բայց տակաւին ասանկ սովորութիւն մը մեր մէջ տեղի ունեցած չ'է , այսինքն մեզ ընտրող ժողովուրդը մեծ մասաւր չ'են գիտեր իրենց ներկայացուցչին ինչ սկզբանց տէր ըլլալ :

Արդ , քանի որ մեզ ընտրողք մենք հրատարակաւ դաւանութիւն առած չ'են , իրաւունք ունին միշտ մենք կասկածելու . թէ որ իրենց կամայը համեմատ վարվինք , մենք չ'որհակալ կ'ըլլան . իսկ եթէ ոչ , բողոք կ'արձանան , եւ մինչեւ անգամ զմեզ տապալելու կը ճգնին :

Այս անտեղութեանց առջեւն առնելու համար , ըստ իս մեր վրայ պարտք մը կը գտնեմ ընելիք , այն է մեզ ընտրող ժողովրդոց մեծ մասին թէ բարոյական եւ թէ նիւթական վիճակին վրայ չ'ըսեմ կատարեալ , գոնէ չափաւոր հմտութիւն ստացած ըլլալ :

Այս հմտութիւնը ուրիշ բանով չ'ըլլար , բայց եթէ ազգին անցեալը գիտնալով , եւ ներկան տեսնելով . վերջապէս ըսել կ'ուրեմ խոնարհաբար թէ երեւոյիսանութեան պարտքն է ազգին անցեալ եւ ներկայ պատմութեանց

վրայ քիչ չատ տեղեկութիւն ունենալ , որպէս զի ապագային համար կարող լինի բարի բան մը ընելու : Մեր անցեալ պատմութիւնները ազէկ ըննելու ըլլանք՝ կը տեսնենք թէ Հայոց ազգը միշտ կրօնական ազգ ըլլալ ուզեր է , ամեն բանէ աւելի նախապատիւ սեպեր է կրօնը , իւր առ կրօնս ունեցած չափագանց սիրոյն համար ամեն բանէ յօժարութեամբ հրաժարեր է . կարծես թէ այս ազգին բնական ձիրքն է եղած կրօնասէր ըլլալը , ինչպէս անցեալին մէջ կը կարդանք այս ազգային յատկութիւնը , ներկային մէջ ալ այնպէս կը գտնենք : Մտածենք մէյ մը Եւրոպական անտարբերութեանց օվկիանոսին մէջ ծփացող մեզի պէս խեղճ անօդնական ազգ մը , ոչ ինչպէս որ պէտք է կրօնական դաստիարակութիւն ունի , եւ ոչ ալ արթուն եւ հսկող պաշտօնականներ . ձգենք արեւմուտքէն եւ նոր աշխարհէն եկող ճարտար որսորդներուն մենք մարդ որսալու համար թէ նիւթական եւ թէ բարոյական ըրած ջանքերնին : Երեք տարի առաջ ԼԵ ՄՃԻ լրագրին մէջ կարդացի որ միայն Լիօնի ընկերութիւնը 140 տարվան մէջ 30,000,000 Փրանք ծախք է ըրեր Արեւելքի մէջ կաթողիկոսութիւն ստարածելու համար . չենք գիտեր նոր աշխարհին մէջ որչափ ծախք կ'ըլլայ . անոնց փոխարէն ինչ են վաստկեր , հազիւ հարիւր հազար հոգի , որ աշխատութիւննին չ'արժէր . անոնց ալ կաթողիկոսութիւնը եւ բողոքականութիւնը իրենց համար գոհացուցիչ չ'են . թէ որ այսօր մեր երիտասարդներուն վրայ անտարբերութիւն մը կը տեսվի , անոնք աւելի նմանողութեան համար է , քան թէ համոզմամբ : Մեր մէջի եւ դած ամենէն անտարբերինս աւելի լաւ կը համարի Լուսաւորչի դաւակ ըլլալ քան թէ ՎՕԻԹԷՐի . կանց դրագէտ Հայ մը որ Սահակայ եւ Մեսրոպայ սիրուն անունները յիշուած ատեն երախտագիտութեամբ սիրար չ'ըլցվի , Ասոնք մանրամասն գրուցելու պատճառը ուրիշ բան չ'է , բայց եթէ իմացնել խոնարհաբար իմ ամենատկար գրչովս թէ մեր ազգին բարոյականութեան հիմն է իւր ազգային կրօնը , եւ անոր կեդրոնն է Եջմիածին . վասն զի անկէ ծագեցաւ լոյսը Հայաստան աշխարհի վրայ . Ազգը այն Սուրբ Աթոռին վրայ բազմողը՝ ոչ Իէնորդ կը տեսնէ եւ ոչ Մարկոս , այլ նոյն իսկ Լուսաւորիչը . եթէ կ'ուզենք մեզ ընտրողներուն հաւատարիմ ներկայացուցիչները ըլլալ , եւ ընդհանուր ազգը միութեան մէջ պահել , միշտ պարտաւոր ենք այն Աթոռին հովանաւոր-

րութեանը տակէն չը գառվիլ . վասն զի ազգին դարաւոր կամքն է . եթէ Աստուած չ'ընէ , անոր իրաւասութեանը , անոր դերագահութեանը քիչ մը դպչելու յանդգնինք , գիտնալու ենք որ անոր հետեւանքը քայքայում է , այն ատենը փոխանակ օրհնենքներ ընդունելու անէծքներ պիտի որոտան մեր դիտուն : Մեր թշնամիները ասկէ երեք հարիւր տարի առաջ հասկցան մեր ազգային միութեան հանդսցը Եջմիածինն ըլլալը : քիչ որոմ չը ցանցեցին մինչեւ մեր օրերը մեզ այն Աթոռէն բաժնելու համար . զրպարտութիւն , մասնութիւն չը մնաց որ չ'ընէին թէ ի Տաճկաստան , թէ ի Պարսկաստան եւ թէ ի Ռուսաստան , հոս պատմելը երկայն է , պատմութիւններնիս կը վկայեն , մեր ծերերը աղէկ կը յիշեն , այս վերջին 60 տարվան միջոցին մէջ ինչքը չ'ըրին : Եթէ ազգը Պեղձեանի պէս արթուն բարերար մը չ'ունենար (Աստուած հօգին լուսաւորէ ,) մեր վիճակը ինչ պիտի ըլլար . բայց ունայն տեղը աշխատեցան եւ կ'աշխատին . մեր հոգին կապված է այն աթոռին հետ , թող մենք հեռի ըլլանք քաղաքական նրկատումներ , դարաւոր ապացոյցներ ունիմք մեր ձեռքը , թէ Հայոց ազգը ուր կամ որ տէրութեանց տակը գտնվեր է՝ միշտ հաւատարիմ մընացեր է . Ազգը , ինչպէս որ ըսի , կրօնը ամենէն նախապատիւ համարելով անոր հիմնադրին պատտիրանին միշտ հետեւեր է . « տուք զկայսերն կայսեր եւ զԱստուծոյն Աստուծոյ » :

Մենք 400 տարիէն աւելի է որ Օսմանեան բարեխնամ տէրութեան հովանաւորութեանը տակն ենք . փնոք Աստուծոյ , 400 տարվան միջոցին մէջ մեր առ տէրութիւննիս ունեցած հաւատարմութիւններուս ամենափոքր կասկածի տեղի մը չ'ենք տուած : Տէրութիւնը աղէկ ճանչելով մեր հաւատարմութիւնը , մեր վրայ այնչափ վստահութիւն ունեցեր է որ մինչեւ անգամ իւր ամենափոփոխ գործերը մի միայն հայոց ազգին է յանձներ , այսինքն իւր փողերանոցը եւ վառողանոցը եւ կամ ասոնց նման փափուկ գործերը : Այս 4 դարու միջոցին մէջ Ազգը մէկ կողմէն իւր հաւատարմութեանը արատ չ'է բերեր , միւս կողմէն Եջմիածինն ալ պակաս չ'է սիրեր : Թող չը վախնանք ըսելու մեր առատագուծ տէրութեան թէ մենք աւելի զինքը կը սիրենք քան զՌուսը , եւ զՊարսիկը . բայց ոչ նուազ կը սիրենք եւ զԵջմիածինն . վասն զի մեր միութեան հանգոյցն է , մեր նախնեաց մեզի թողած մի միայն սրբազան յիշատակնիս է . թողու չ'որհէ մեզ

որ այն սուրբ յիշատակը համարձակ սիրենք . ես շատ վստահ եմ թէ մեր խնամատուն կառավարութիւնը նկատելով մեր անկեղծութիւնը , իւր համարումը աւելի պիտի աւելցնէ քան թէ ցած բողաքչանքներն իստեանելով :

Գանք այս ներկայ եղած կաթողիկոսաց խնդրոյն . եթէ Երեսփոխանական ժողովը ազգը կը սիրէ , եթէ կ'ուզէ որ մեր ազգային միութիւնը չը քայքայի , ամենեւին այս երկու ապօրինաւոր կաթողիկոսութեանց ընտրութեանցը մասնակից ըլլալու չ'է . մեր մասնակցութիւնը էջմիածնայ կաթողիկոսութեանն էն հրաժարում կը նշանակէ . այս ժողովը անոնք իբրեւ թեմական առաջնորդ ճանչելու է , իրենց թեմականները սով կ'ուզեննէ ընտրին , կ'ուզեն իրենց ընտրածներուն կաթողիկոս ըսեն , կ'ուզեն առաջնորդ , անոնք մեզի վերաբերեալ բաներ չ'են . միայն եթէ կ'ուզէ՝ ժողովը տեսուչ մը զրկել , ան ալ ոչ պաշտօնապէս , որպէս զի կարելի եղածին չափ արժանաւորներէն ընտրվի : Այս խնդրոյն վրայ ելքէկ մեր Մեծապատիւ Անգամներէն Խօսակարան Օղակէն էֆէնտին ազէկ խորհրդածութիւններ ըրեր է Օրագիրը լրագրոյն մէջ :

Ժողովոյն ուշադրութիւնը կը հրաւիրեմ այն յօդուածին վրայ :

ՕԳՍԷՆ ԷՖ . — Շարունակ երեք նիստ եղաւ որ վիճարանութիւն կ'ըլլայ Սոյ խնդրոյն վրայ եւ դեռ չը վերջացաւ , ու այս ընթացքով դեռ եւս կրնայ երկար տեւել : Նախ այս խնդրոյն մէջ էջմիածնի խօսք չարժանողներն երեւակայական վտանգ մը ցոյց տալով խնդիրը կը շփոթեն եւ Ընդհ . ժողովն ալ կ'ամբաստանեն իբրեւ կասկածելի . ուստի կ'առաջարկեմ որ խնդրոյն մէջ էջմիածնի դէմ վտանգ չը գտնվիլը քըւէի զրկելով անմիջապէս լուծվի եւ վերջանայ այս խնդիրը : Բ . կ'ըսվի թէ Ազգը երեք կաթողիկոս ունենալով եկեղեցւոյ միութիւնը բաժանման վտանգի մէջ կը մնայ : Երեք գլուխ ունենալին ժամանակին եւ քաղաքականութեան գործն է , մեր գործը չ'է վերցնել , ոչ Սոյ եւ ոչ Ազգամարայ կաթողիկոսութիւնը : Նմանապէս մեր գործը չ'է զանոնք նուաստացնել կամ բարձրացնել , ատի իրենց գիտնալու բանն է . թողունք զիրենք իրենց նախնական վիճակին մէջ : Քանի որ իրենք իրենց մասնաւորութեանց մէջ մենէ բան մը չ'են պահանջիր , մենք իրաւունք չ'ունինք միջամտելու թեմական իրաւանց եւ գարաւոր սովորութեանց մէջ :

Գ . Սոյ կաթողիկոսին մեր Ընդհ . ժողովը

վէն ընտրվելու կամ չ'ընտրվելու կեանք գալով ինչպէս որ թողաւ որէ մը ծնած գաւազը թառաւորաղն է եւ ուրիշ բան չը կրնար ըլլալ , այսպէս ալ Տաճկաստանի Հայոց ամբողջութիւնը ներկայացնող Երեսփոխանութեանն էն ծնած կաթողիկոսը՝ ինչ անուն ալ որ տաս անոր , կ'ըլլայ Տաճկաստանի Հայոց կաթողիկոսը :

Փարիզեան էֆէնտին թեմերու բաժանման մէջ Ազգային միութիւնը խզելու վտանգ կը նշմարէ . բաժանում մը արդէն կայ՝ զոր ժամանակը գործած է , մեր միջամտութեամբ բաժանումը պիտի գործնայ եւ աւելի մեծ ըլլայ , որոյ հետեւանքը մենք այժմէն չ'ենք տեսնիր . արդ՝ կը հարցնեմ , այս երկու բաժանման ճին ընդունինք , մեծը զոր մեր ձեռքովը պիտի ընենք , թէ փոքրը զոր գարերը ծնած են արդէն :

Խնդիրն իր շփոթ վիճակէն ազատելու համար լեթադրենք որ Նիկողայոս արատաւոր անցեալ մը չ'ունենար , կամ ընտրեալը փոխանակ Նիկողայոսն ըլլալու ներսէս Սրբազանն ըլլար , այն ատեն Բնչ պիտի ընէինք : անշուշտ ուրիշ կերպ պիտի մտածէինք եւ այս օրվան կարծիքը չը պիտի ունենայինք : Ուստի կը կրկնեմ որ Սոյ միարանից հաւաքումը այս դրժուարութեանց միակ դարձանն է : Թերեւս առարկվի թէ Սոյ միարանութիւնը մարդ չ'ունի . անաւասիկ իմ գիտցածներէս եօթը եպիսկոպոսաց ցանկ մը :

- Ներսէս Եպիսկոպոս Վարժապետեան
- Յովհաննէս » Եղեռեան
- Յակոբ » Տիւրիկի
- Պետրոս » Հաճինի
- Յակոբ » Տրգրանակերտի
- Սրապիոն » Պէհօնի
- Զաքարիա » Մանճըլլիսի

Եթէ ասոնք հաւաքելը գժուարին է ըսող ըլլայ , կը սխալի . ըստ իս 400 տարվան իրաւունք մը չը գիտնալով բանաբարեւ աւելի դրժուարին է :

Տ . Յ . ԵՊԻՍ . ԿԱՊՈՒՏԻԿԵԱՆ . — Տարբեր արժաններէ օձեալ եկեղեցական պաշտօնէից մէջ խարութիւն չ'ենք կրնար դնել . Ազգին եկեղեցական պաշտօնեաները մի եւ նոյն ազգութեամբ կը պարծին . անոնց ձեռնադրութեան եւ կրօնական ձեւերուն մէջ բնաւ զանազանութիւն չ'կայ : Պատմական ապացոյց մը ունինք : Յունաց Կեռ Մանուէլ կայսրը Ներսէս Ենորճայի Հայրապետին՝ որ Նիկիկոս կա-

թողիկոս էր , նամակ գրած եւ պատասխան ընդունած է . այն պատասխանին մէջ Ենորճային կը գրէ այսպէս . « Բարձեալ է այժմ թառաւորութիւն մեր յայտ աշխարհէ . . . եւ « Հայրապետութեան արժոյթ թափուր թողեալ » . . . յօտար երկիր տարուբերիմք պանդըրտութեամբ » :

Ըսել է թէ Հայրապետական արժոյթն տեղը փոխված էր այն ատեն , բայց դարձեալ Մայր Աթոռը նոյն ինքն էջմիածինն էր : Հիմա մենք պէտք չ'է որ Աթոռոց խնդիրը կաթողիկոսաց խնդրոյն հետ շփոթենք . անվաւերութեան վրճիտ մը կայ Նիկողայոսի եւ Խաչատուրի անձանց վրայ . սակայ լուծված խնդիր մըն է եւ ես չը կրնար դառնալ . բայց այն երկու Աթոռները կան եւ պիտի մնան ինչպէս որ մնացեր են ցարդ . ոչ ոք դիտաւորութիւն ունի զանոնք վերցնելու , Սրբազան Գէորգ կաթողիկոսն ալ այդ դիտաւորութիւնը ունեցած չ'է երբէք , այլ ինչպէս իւր կոնգակին մէջ գրած է , « Թոյլ տուք մեռելոցը թաղել զմեռեալս իւրեանց » . ըսել կ'ուզէ թէ թողէք զանոնք ինչ կ'ուզեն ընեն . ուստի Ընդհ . ժողովը խառնվելու չ'է անոնց ընտրութեան , ըստ որում անոնք Ազգին կաթողիկոսները չ'են . բայց ընտրութեանց օրինաւոր կատարմանը համար կրնայ եղանակ մը որոշել եւ կանոններ սահմանելով անոնց շարաբերութիւնները Մայր Աթոռոց հետ բարեւելու գժուարութեան առիթները բառնալ :

Սրբազան Նախագահին առաջարկութեամբը քաւորդ մը հանդիստ արվելէ ետքը , Ատեանը նորէն բացվելով վիճարանութիւնը շարունակի սկսաւ :

ԻՌԹԻՒՃԵԱՆ Կ . ԷՖ . — Մինչեւ հիմա խօսվածներուն մէջ քանի մը կետեր կը նշմարեմ , որք . բաւական ծանր են : Նախ Կիւմիւշկէրտան էֆէնտին իր ատենաբանութեան մէջ այնպէս մը կը ցուցնէ որպէս թէ Ընդհ . ժողովն իր ասկէ առջի որոշումներով էջմիածնայ արժոյթն հակառակող զիրք մ'առած եւ զայն տկարացնելու միտում ունեցած ըլլայ . իր երկիւղը գլխաւորապէս սա է թէ Ազգ . երեսփոխանութիւնը Սոյ եւ Ազգամարայ արժոյթն խնդրոյն միջամտելով էջմիածնայ արժոյթն որդիական սէրն ու ակնածութիւնը կը պակսեցնէ : Ատի Ընդհ . ժողովոյն դէմ անիրաււ ամբաստանութիւն մըն է . նախորդ որոշումներն ընող վիճակային համագումար եւ Ընդհ . ժողովոց մէջ էջմիածնի եւ պիսկոպոսներ կային , անոնց դէմ ալ ամբաստանութիւն մըն է : Այդ ժողովոց դիտաւորու-

թիւնն ու փափաքը ուրիշ բան չ'էին՝ այլ եթէ յիշեալ երկու արժաններն Ազգ . երեսփոխանութեան խնամոցն ու իրաւասութեան ներքեւ առնելով իրենց ժողովրդեան վիճակը բարեւոքելու կարող զիրք մը տալ անոնց , եւ Ազգին ու միանգամայն մայր Աթոռոցն հետ ներդաշնակաւոր շարաբերութեանց մէջ մտցնելով վերջ տալ իրենց ապօրինաւոր եւ ապստամբական դրժութեանը , որով մինչեւ ցարդ քար գայթակգութեան դարձած էին Ազգին առջեւ : Յաւաքի է որ նոյն իսկ էջմիածնայ մեծ ծառայութիւն արտադրող այսպիսի դիտաւորութիւն մը սխալ կը հասկցվի եւ շարաշար կը մեկնվի :

Բ . Կապուտիկեան Եպիսկոպոսը կ'ըսէ , « թոյլ տուք մեռելոցը թաղել զմեռեալս իւրեանց » , ասով Սոյ եւ Ազգամարայ ժողովուրդը մեռեալ կը համարի , այս ալ անընդունելի խօսք մըն է Երեսփոխանութեան համար որու դէմ ամենայն զօրութեամբ կը բողոքեմ :

Գ . Օղակէն էֆէնտին ալ կ'ըսէ թէ Ընդհ . ժողովին ընտրութիւնը Տաճկաստանի Հայոց կաթողիկոս կը ծնանի . այս ալ սխալ է . այն կաթողիկոս են անոնք ալ իրենց անձուկ սահմանին մէջ : Յոյներն ալ չորս Պատրիարք ունին , Կ . Պօլսոյ , Երուսաղէմի , Անտիօքայ , եւ Աղէքսանդրիոյ : Ասոնց չորսն ալ յունաց Ազգ . ժողովը կ'ընտրէ , բայց չորսն ալ իրաւասութեան սահմանները դատ եւ տարբեր են . Կ . Պօլսոյ պատրիարքն ընդհանրական է , իսկ միւսներն մասնաւոր . ասով յունական եկեղեցւոյ միութիւնը բաժնված չ'ըլլար : Մեր Ընդհ . ժողովն ալ էջմիածնի կաթողիկոսը կ'ընտրէ իբրեւ ընդհ . կաթողիկոս . իսկ միւսները իբրեւ կաթողիկոս . ասկէ ինչ շնորհաւ կրնայ ծագիլ էջմիածնի համար , չ'եմ կրնար հասկնալ :

Ուստի հին որոշումներուն դառնալով կ'ըսեմ թէ պէտք է զանոնք գործադրել : Արդէն 1867ի Համագումար եւ Ընդհ . ժողովներն ընտրութեան ձեւն ալ որոշած են . Քաղ . ժողովը քիչ մը չափաւորելու գած է զայն . ըստ իս այս ալ անընդունելի է , քանի որ նախորդ ուրոշումները իբրեւ չեղեալ հրատարակված չ'են :

Տ . ՄԵԼՔԻՍԵԴԵԿ ՎԱՐԴ . — Երեսփոխանական ժողովոյ միջամտութիւնը՝ ոմանք շնաստակար կը համարին էջմիածնայ Աթոռոցն . ես կը հարցնեմ թէ այս միջամտութեան նախառակն ինչ է , բարիք թէ չարիք . ես այնպէս կը հաւատամ որ Սոյ եւ Ազգամարայ իւեղձ եւ կիսապայքերի ժողովրդոց բարիք պիտի ծնանի

այս միջամտութենէն . միթէ այն ժողովուրդներն Հայաստանեայց եկեղեցւոյ զաւակներ չեն, միթէ զանոնք երեսի վրայ անխնամ թողուլը էջմիածնայ ծառայութիւն ընել է : էջմիածնայ Ա. Ե. կաթողիկոսն իրեւ ընդհանուր Հայրապետ Հայոց՝ անշուշտ պիտի ուրախանայ երեսփոխանական ժողովոյ այս միջամտութեան վրայ, որոյ նպատակն ոչ այլ ինչ է՝ բայց եթէ յիշեալ ժողովրդոց վիճակը բարւոքել : Եթէ դոքա իրենց բարոյական եւ մտաւորական զարգացման համար ինքնին գործելու կարող վիճակի մը հասած ըլլային, անշուշտ մեր օժանդակութիւնը անհրաժեշտ չ'էր ըլլար եւ խնդիրն այսչափ կարեւորութիւն չ'էր առներ . բայց քանի որ այսպէս չ'է, սրբազան պարտաւորութիւն է մեզի՝ մեր խնամոց տակ առնուլ զանոնք եւ անոնց օգուտը խորհել ու գործել՝ զայս մերժել . բարիքը մերժել է . ով կարող է ըսել թէ մեր միջամտութիւնը բարիք չ'է եւ չարիք պիտի ծնանի նոյն ժողովրդոց համար . ուստի եւ ես համամիտ եւ ձայնակից Խթիւծեան էֆէնտիին կ'առաջարկեմ որ նախորդ որոշումնք անմիջապէս գործադրվին :

ԲԻՄ . ԷՏ . — Եթէ կրօնական ուխտ մը կայ որում դէմ էջմիածնայ եպիսկոպոսունք մեղանչել կը կարծեն Սոյ աթուոյն գործին խառնուիլով, թող բացայայտ ըսեն եւ բացատրեն զայն : Թէեւ մենք աւետարանէն սկսեալ մինչեւ մեր մաշտոցը եւ տօնացոյցը 'ի խոյզ արկինք եւ չը գտինք անանկ ուխտ մը . կապուտիկեան սրբազանէն կ'իմանա՞ք թէ ըստ կոնդակի էջմիածնայ կաթողիկոսին զոր դեռ տեսած չ'ենք, Սոյ ժողովուրդը, մեր սիրելի եղբարքն ու քոքը մեռեալ կը համարվին . մեր խիղճը չըտանիր զայս, չ'ենք կրնար ներել որ մէկ անձի փառասիրութեան համար այն խեղճ ժողովուրդը մեռեալ մնայ եւ մեր խնամքներէն դրկվի, որոց այնքան պէտք եւ կարօտութիւն ունի, ինչպէս Արժ . Մեղքիսեզ վարդապետ լաւ բացատրեց : Արդ՝ քանի որ այնպիսի ուխտ մը չը կայ, եւ եթէ կայ ըսեն՝ մեր Արքազան Գիրքերէն դուրս ուխտ մը պիտի ըլլայ այն՝ որ մեզի համար նշանակութիւն չը կրնար ունենալ, կ'առաջարկեմ որ նախորդ վճիռը գործադրվի :

ՄԱԶԼԸՄԵԱՆ ԷՏ . Սոյ խնդիրը Քաղ . ժողովոյ կողմէն ընդհ . ժողովին ներկայացաւ . Երեսփոխանք պարտաւոր էին իրենց կարծիքն ու զխոսողութիւնը յայտնել Քաղ . ժողովոյ առաջարկութեան վրայ . շատերը խօսեցան եւ հետզհետէ աթուոց, անձանց, յարաբերու-

թեանց, ընտրութեանց եւ այլ պարագայից վրայ խնդիր յարուցնելով զազաւարները ցրվեցան, երեսփոխանք մաս մաս այս զանազան պարագայից վրայ կարծիք յայտնելով խնդիրն իր պարզութենէն ելաւ եւ այնքան ձապարհեցաւ, որ չը կրցաւ որոշվիլ թէ արդեօք Երեսփոխանական ժողովն իրաւունք եւ ձեռնհասութիւն ունի այս խնդիրը լուծելու : Ըստ իս խնդրոյն լուծուող դիւրացնելու համար պէտք է զայն հետեւեալ դասակարգութեան վերածել :

Ա . Ապօրինաւոր կաթողիկոսներ .
 Բ . կաթողիկոսաց ընտրութիւն .
 Գ . Ընդհ . ժողովոյ իրաւասութեան սահման .
 Դ . էջմիածնայ աթուոց իրաւունք .
 Ե . Երեք կաթողիկոսութեանց յարաբերութիւնք :

Ա . կետը Ատենապետ էֆէնտի տուած տեղեկութեանց շնորհիւ պարզվեցաւ արդէն եւ հարկ չը կայ նորէն անոր վրայ դառնալու :

Երկրորդը՝ այն է կաթողիկոսաց ընտրութիւնը՝ խնդրոյն էական մէկ կետն է, որմէ կը ծագի երրորդը՝ այն է Ընդհ . ժողովոյ ունեցած իրաւասութեան սահմանը Տաճկաստանի ազգային գործոց մէջ . աթուոսները 3 են . մէկը ընդհանրական ճանշված է ազգոյնն եւ եկեղեցւոյ հեղինակութեամբը . միւս երկուքը թեմական են եւ մասնաւոր . ուստի Ընդհ . ժողովոյն անոնց ընտրութեան միջամտելը չ'է թէ իր իրաւասութենէն չ'է, այլ իր իրաւունքը չ'է որովհետեւ եթէ ընտրէ, վաղը նոյն պարտաւորութեամբ ուրիշներն ալ կրնայ ընտրել . հետեւաբար էջմիածնայ աթուոցն իրաւասութեան վտանգ կը ծագի . այդ իրաւասութիւնը կաթողիկոսին չ'է, այլ Աթոռին, եւ Աթոռը ամբողջ Ազգին է, որոց մէջն է Հնդկահայը, Պարսկահայը, եւլն . եթէ Ազգին ընդհանրական կաթողիկոսը չը պահպանէ զայդ Աթոռին իրաւունքը, ժողովուրդը կը բողոքէ, ինչպէս Պաւլոսեանցի դէմ երբեմն Հնդկաստանէն բողոքեց :

Եթէ եկեղեցւոյ շահը մտածենք, այդ երեք Աթոռներն 'ի մի ձուլելով մէկ Աթոռ պէտք է ունենալ . բայց քաղաքականութիւնն ասի անկարելի կ'ընէ . ուրեմն պէտք է այս երեք աթուոց բարեկարգութեան եւ յարաբերութեանց խնդիրը ձեռք առնուլ, անոր կանոնները Ընդհ . ժողովով սահմանել եւ պէտք եղած առաջարկութիւնն ընել առ որ անկ է :

Մէկ քանի ձայներ խնդրէն չը չեղիլ՝ ազգարարեցին :

Տ . ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊԻՍ . — (Ընդմիջելով Մաղ-լուման էֆէնտիին խօսքը) . Այդ բարեկարգութեան խնդիրն արդէն լուծված է :

ՄԱԶԼԸՄԵԱՆ ԷՏ . — (շարունակելով) Շատ լաւ, Աթոռոց բարեկարգութեան խնդիրը թող մնայ իր ժամանակին . ընտրութեան խնդրոյն գառնալով իրեւ միջին ճանապարհ կ'առաջարկեմ որ Քաղ . ժողովն երեք ընտրելի ներկայացնէ թեմականաց եւ անոնցմէ մէկը ընտրել տայ :

ՔՕԼՕԼԵԱՆ ԷՏ . — Երեք շարքէ ի վեր վիճարանութիւնը կը շարունակենք եւ տակաւին չը կրցանք վերջ մը տալ : Մարդ մը եթէ իրաւունքներ ունի, պարտքեր ալ ունի . երեսփոխանութիւնը իրաւունք ունի խնդիր մը լուծելու, բայց իրաւունք չ'ունի իր նախորդին վճիռը ջնջելու : Խնդրոյն ամեն մութ կետերը ալ լաւական պարզված են . ընտրութեան համար Քաղ . ժողովոյ առաջարկած միջոցը շատերուն լաւագոյն թուեցաւ թէեւ, բայց ոմանք ընտրութիւնն ալ նախորդ երեսփոխանութեան որոշած ձեւով գործադրելու հարկ կը տեսնեն . պէտք է Գիւանն այս երկու ձեւերը քուէի դնէ եւ խնդրոյն վերջ տայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՏ . — Քօլօլեան էֆէնտիին առաջարկութիւնը պարտ կը դնէ Գիւաննիս վրայ՝ ժողովոյ ուղղորդութեանը ներկայացնել որ այս վիճարանութիւնը շարունակ երեք նիստ տակեց եւ իւրաքանչիւր խօսող մէկ քանի անգամ խօսեցաւ . Երեսփոխանութիւնը եթէ վիճելու իրաւունք ունի, պարտաւոր ալ է իրեն ներկայացած խնդիրներն անլոյծ չը թողլու : Անցեալ նիստին երբ խնդիրը քուէի դնել առաջարկվեցաւ, խօսք ուղղորդեալ եղան եւ վիճարանութիւնը շարունակել որոշվեցաւ, Սրբազան Նախագահ Հօր յայտնած բաղձանաց համեմատ Այժմ քուէի առաջարկութիւնը կը նորոգվի, ուստի եւ Գիւանը կը պարտաւորի դարձեալ ժողովոյն կարծիքն հարցնել թէ վիճարանութիւնը բաւական կը համարի եւ կ'ուղէ խնդիրը քուէի դնել :

ՕԳՍԷՆ ԷՏ . — Նախ, սր առաջարկութիւններն են քուէի դրուելիքը՝ առաջարկութիւնները քանի մը հատ են . Խթիւծեան էֆէնտիին ըսածը Յունաց մետրապօլիտութիւններուն վրայօք՝ մեր եկեղեցւոյն չը համաձայնիր եւ անոնց հետ չը համեմատիր . Սահմանադրութիւնը, ազգային աւանդութեանց պահպանութիւնը պարտ կը դնէ մեր վրայ . ձեր քուէի դրածը աւանդութեանց եղծում է, իմ խիղճս հանդարտելու համար կ'ըսեմ, պատասխանատուութիւնը ձերն է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՏ . — Քուէի դրվիլը երբ ընդունվի, պիտի ըսեմ թէ ինչ է քուէի դրվիլիքը՝ Քաղ . ժողովն առաջարկութիւն մը ըրած է, պէտք է նախ այն քուէի դրվիլ :

Այս ըսելով Ատենապետ էֆէնտիին ժողովականաց կամքը հարցաւ, եւ մեծագոյն մասամբ որոշվեցաւ վիճարանութիւնը փոքր մի եւս շարունակել : Օրը տարածամած ըլլալով վիճարանութեան շարունակութիւնը յաջորդ նիստին ձգվեցաւ :

Երեսփոխան էֆէնտիին առաջարկեց որ ըստ որում երեսփոխաններէն շատերն արդէն խօսեցան եւ կարծիքնին յայտնեցին, խօսողները գալ նիստին նորէն խօսք չ'ուղեն, որպէս զի վիճարանութիւնը չ'երկարի : Նոյպէս առաջարկեց որ ժողովին ատենադրութեանց տպագրութեամբ հրատարակութեան խնդիրն այսօրվրէն լուծվի :

Ատենապետ էֆէնտիին Երեսփոխան էֆէնտիին առաջարկութեան պատասխանելով յայտնեց թէ քանի որ վիճարանութեան շարունակութիւնը որոշված է, կարելի չ'է զայն սեղմել եւ խօսիլ ուղղորդներն արգիլել, միայն եթէ ժողովն ուղէ գալ նիստին վիճարանութիւնը կը վերջացնէ :

Իսկ Ատենադրութեանց հրատարակման խնդրոյն գալով, առաջարկեց տետրակ առ տետրակ տպագրել եւ երեսփոխանաց զրկել ի վերձանութիւն : Այս առաջարկութիւնը ժողովով ընդունվեցաւ :

Այս աթիւ Ատենապետ էֆէնտիին յիշեցուց ժողովին որ Ա . նիստին մէջ, որմէ խի բացակայ էր, ժողովն որոշեց է Ատենադրութիւնը հանրապատումով գրել եւ ամեն Երեսփոխանի խօսածը բառ առ բառ արձանագրել, եւ թէպէտ, ըսու, ասի շատ կարեւոր եւ փափաքելի բան մըն է, որոյ օգուտները գուցէ ուրիշներէն ալ աւելի ես զգամ, սակայն որովհետեւ մեր մէջ սղագրութիւն չը կայ, պէտք է աղատ թողուլ գիւանը՝ որ բառ առ բառ խօսքերը չ'արձանագրէ, այլ անոնց բովանդակ իմաստը համառօտագրէ Ատենադրութեան մէջ :

Ժողովն այս դիտողութիւնը իրաւացի դատելով Գիւանին յանձնեց որ արժան եղած կերպով գրվին ատենական Արձանագրութիւններն առանց իմաստից փոփոխութեան :


Յաջորդ նիստը յառաջիկայ ուրբաթ օր (սեպ 18) գումարիլ որոշվեցաւ եւ նիստը վերցաւ ժամ 10 ին :

ԱՏԵՆԱՊԵՏ
 Գ . Ս . ՕՏԵԱՆ

ԱՏԵՆԱԴՊԵՐ
 ՌՈՒՍԻՆԵԱՆ

Handwritten text on the left side of the page, appearing to be bleed-through from the reverse side.

Main body of handwritten text on the left page, organized into several paragraphs.



Faint bleed-through text at the top of the right page.

Faint bleed-through text in the middle of the right page.

Faint bleed-through text in the middle of the right page.

Faint bleed-through text in the middle of the right page.

Page 21 verso

Faint bleed-through text at the bottom of the right page.

Handwritten text at the bottom of the right page, possibly a signature or note.

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍՆՏՈՒԿԻՆ

Կը ծախվի ի Գիւանստան Պատրիարքարանի ի Ղալաթիա ,
եւ կը գտվի ամեն գրաւաճառաց քով եւ Եկեղեցեաց բանկայնեքը :